



ԴՐԱԿԱՆՆԵԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

*
* *

Եթ տեսնում եմ, ինչպէս պայծառ
Եւ անարատ զգացմննը ու
Խմբում ենք այս տօնի համար
Մենք զիտութեան անունով,
Վերանում են մութ կնճիռներ
Իմ ամպամած մակատից
Եւ զէթ առ ժամ վիշտն ու հոգուն
Հեռանում են իմ սրտից:

Եւ ասում եմ իս հաւատով.
Անելի չէ այս զիշեր,
Թէ որ փայլին մի ջերմ լուսով
Առաօտեան վառ շողեր:
Եւ այս օրն է այդ առաօտ,
Որ բացուում է մթան մէջ —
Թող այդ լրսը լինի աղօտ,
Միայն մնայ մի՛շտ անշէջ:

Յ. ՅՈՒՆՆԵՆԻՑԻԱՆ.

27 Սեպտ. 1897.



ՊՐԵՍՈՒԱՐԺՈՒՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ԱՐԵՐԵՑ“

ԱՐԴՅՈՒՆԻՑ ԱՐՄԱԿԱՆՈՅՑ

Ց Ե Զ Մ Ի Ա Շ Ի Ն .

Մեծ ու փաքք Սոկրատները շնորհակալու-
թեամբ ստացայ, զոր հաճած էր նրա. Աշխատա-
սիրողը իմ անուան նույիրել.

Յառաջարանի (ԽԴ) այս եղբակացութիւնը,
«Արգելօք Երուսաղէմի Զեռագիրը Երարատեան
գաշտից չէ տարուել Հնդկաստան Շահարասի գաղ-
թականութեան ժամանակ և արգելօք նա համարեա
մեր Զեռագրի ժամանակակից լինելով՝ միմեանցից
արտագրուած չե՞նչ: — առիթ տուաւ ինձ զոնէ
Ա. զիրքը բաղդատել՝ յօրմէ կ'եղբակացնեմ; կրկին
Զեռագիրները միմեանցից բոլորովին տարբեր օրի-
նակներէ արտագրուած են. Երուսաղէմինը աւելի
վատահելի և ընտիր օրինակ է լեզուի օրինաց հա-
մաձայն ընթերցուածովք. ուստի էջմիածնի օրինա-
կին մէջ աշքի զարնող պակասութիւնք չը կան մեր
օրինակին մէջ. — Սա, Դա, Նա գերանուանց սեռական-
ներուն, յատուկ անուանց ուղղականներուն, կամ
նախորի — տրականներուն ծայրը յ աւելորդ տառը
չը կայ մեր Զեռագրին մէջ. յօդերու և նախզիր-
ներու անձահ կրկնութիւնք և ըստ պահանջելի տե-
ղեաց պակասութիւնք հաղուաղէպ են. բայերու
աներեւոյթքներուն և անցեալ ընդունելութիւնք
անխորի միմեանց տեղ զործածուած չեն և ոչ կա-
տարեալին եղակի երրորդ գէմքը իրբե անցեալ ըն-
դունելութիւն և փոխագործարար:

Մենք այս մանր մունք տարբերութիւնք, որ
ամեն էջի մէջ կը փնտան, զանց ընելով՝ զլիաւոր
տարրերութեանց ցանկ մի պատրաստելով ներփա-
կեալ կը զրկեմք պատուական «Երարատչի խմբա-
գրութեան», զոր նեմէ պատճաշ և օգտակար զատէ,
Հրատարակութեամբ բանասիրաց ուշագրութեան
յանձնէ:

Բաղդատութեան ցանկին մէջ թուանշանները
էջերը ցոյց կը տան, իսկ տառանիշները տողերը.
Ներգծեալք մեր օրինակին ընթերցուածներն են,
և փակագծեալք, ինչպէս (սուրբ) թագաւորն կամ
եպիսկոպոսն մեր օրինակին մէջ պակսածներն են
համաձայն բնագրին:

Այս առթիւ աւելորդ չեմ համարեր ուղղել
Արժ. մի ուրիշ սինալը, թէ Երուսաղէմ ինդր-

1. Նաև ուրախ եմ որ Մրազամբ պարզում է այս
խնդիրը. սիսար իմաց չէ, այլ ինձ այդպէս եմ հաղոր-
դել. որք, պիտի է խոսովանեմ, իւր ժամանակիր ինձ վայ
ախորժելի սպառուորիմ լրողից; Մ. Վ.